

ԸՆՁՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՍ

ՆԱԽԱԳԱՐԱՑՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԿԱ

Նկատի ունենալով, որ Հայաստանի քաղաքական դաշտի իրադարձությունների տրամաբանությունը Ռուսաստանի գործընթացների հայելային արտացոլությունն է, ստիպում ենք բազմակողմանի վերլուծել այն գործողություններին, որ կատարում է պաշտոնավարման երկրորդ ժամկետն առարկող Վլադիմիր Պուտինը: Նա պաշտպանություններն նախարար Սերգեյ Իվանովին ազատեց պաշտոնից և նշանակեց ՌԴ առաջին փոխվարչապետ: Փորձագետներն այդ քայլը գնահատեցին որպես «ժառանգորդներին» մրցակցություն առաջացնելու քայլ, քանի որ Իվանովը իր աստիճանակարգով հաջողությամբ միևս առաջին փոխվարչապետ Դմիտրի Մեդվեդևին, որն արդեն բազմակողմանի վարչության է, ինչ հանրաթեմանը մատուցում է իբրև նախագահի հաջորդական փոխարինող: Պուտինը իշխանություններում փաստացի տալիս է նախընտրական պայքարի մեկնարկ, նախագահի ընտրությունները սկսելով բուն ընտրություններից մեկուկես տարի առաջ: Դրա տրամաբանությունը կարծես թէ պարզ է: Այդպիսով, կրեմլը արհեստակապես երկարաձգում է ընտրական գործընթացը, որպեսզի շատ ժամանակ ունենայ հասարակական տրամադրությունները վրայ ազդելու և գործընթացի անկիւնները հարթելու համար: Այլ կերպ ասած, բուն ընտրական գործընթացը, սկսելով այժմ, Պուտինը թերեւս 2008 թվականի ընտրությունները վերածում է գոտի ֆորմալ ընթացակարգի:

Տեղի ունեցածը տեղափոխելով Հայաստան, հարց է առաջանում՝ Պուտինի գործողությունները Ռուսաստանի քաղաքական կրկին նույնություններ են, թե կ'ընդօրինակի դրա միայն բովանդակային տրամաբանությունը, իսկ արտաքին տեսքի առումով կարող է իմպրովիզանել, հաշուի առնելով Հայաստանի պետական կառավարման համակարգի կառուցումը: Այն չի ենթադրում փոխվարչապետի պաշտոն: Վարչապետի փոփոխությունները Ռուսաստանի քաղաքական իրադրությունները մնացել է երեք ամսից էլ պակաս: Սակայն ինդիքն այն է, որ Հայաստանի նախագահը, ի տարբերություն Պուտինի, դեռ նոյնիսկ մեկ ժառանգորդի ակնարկ չի արել, ուր մնաց առաջ քաշող երկրորդին ու մրցակցություններն առաջին իշխանություններում: Ռուսերը Քոչարեանը յամառօրէն իրականում է անգամ իստել 2008 թվականի իր պլանների մասին: Դրա պատճառը երեւի թէ այն է, որ ի տարբերություն Պուտինի, Քոչարեանը Հայաստանի քաղաքական դաշտի գործընթացների վրայ չունի միանման ազդեցություն: Այդ դէպքում որոշակի որեւէ քայլ իր մէջ պարունակում է մեծ վտանգ, քանի որ անելուց յետոյ անհրաժեշտ է լինելու տէր կանգնել այդ քայլին, այն պահել սեփական վերահսկողության տակ: Մինչդեռ Ռուսերը Քոչարեանին ակնյայտօրէն կասկածում է, որ ինքը կարող է դա պահել սեփական ենթակայություններն առաջ, կարող է վերջ կարգաւորել ու հսկել, որ 2008 թվականից առաջ սկսուի նախագահի թեկնածուների մրցակցություններին, այլ ոչ թէ թեկնածուների դաւադրություններն ընդդէմ Ռուսերը Քոչարեանի:

Թերեւս հենց դա է պատճառը,

որ Հայաստանում 2008-ի իշխանական թեկնածուներին ոչ թէ նախագահն է առաջադրում, այլ նրանք ինքնառաջադրում են: Իրավիճակի վառ պատկեր է Վարդան Օսկանեանի օրինակը: 2006-ի Սեպտեմբերին նախագահության արձույտը չարարող կայացրած արտագործնախարարը բազմակողմանի արագ էլ լուց և անցազուրկական համայնքները զարգացնելուն: Գուցէ հենց այն պատճառով, որ չստացաւ Ռուսերը Քոչարեանի աջակցությունները, թէեւ Քոչարեանի համար Օսկանեանի առաջադրումը բազմակողմանի նպատակ է, այն իմաստով, որ նախագահի համար ուղղակի անթույլատրելի է սեփական իշխանություններում ունենալ նախագահի միայն մեկ, և այն էլ ինքնառաջադրում թեկնածու: Խօսքը Սերժ Սարգսեանի մասին է: Եթէ Սարգսեանն իշխանություններում չի ունենում մրցակից, ապա Քոչարեանի համար արդէն շատ բարդ է լինում նրա հետ գալ իշխանություններում նրա հետ գալ իշխանություններում յանձնման փոխադասակարգում համաձայնություններ, և նա թերեւս ստիպում է լինելու աւելի շատ զիջում կատարել: Մինչդեռ Սերժ Սարգսեանը շատ աւելի արագ հասկացաւ, որ Վարդան Օսկանեանն էլ իր պէս ինքնառաջադրում մէկն է: Եւ այդ իրավիճակում թերեւս պաշտպանություններն նախարարին օգնեց բանակային կեանքին ծանօթ լինելը, և «դէմքեր» թեկնածուն ՀՀ պատգամաւորների հարցապնդումներով ու արտաքին քաղաքականության ուղղությունները մի քանի «բլիթ-կրիկներով» շատ արագ իր տեղը դրեց նորակազմի թեկնածուին: Այդ իրավիճակում շատ աւելի հաւանական է դառնում, որ իշխանությունները կարող թեկնածու առաջ քաշի հենց Սերժ Սարգսեանը, ոչ թէ Ռուսերը Քոչարեանը: Երկրորդ թեկնածուն պէտք է նաեւ պաշտպանություններն նախարարին, բայց ընդամենն իբրև ֆոնի: Եւ չի բացառում որ դա լինի օրինակ հենց նոյն Վարդան Օսկանեանը, եթէ իհարկէ Սերժ Սարգսեանը որոշի շարունակել ռուսական գործողությունները Հայաստանում կրկնօրինակելու հայ քաղաքական աւանդույթը: Նա իհարկէ չի կարող, ինչպէս Պուտինը, երկրորդ

ՊԱՐՏԱԴԻՐ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ ԸՆԹԵՆԻՔԻՆ

Մենք սիրում ենք նշել ու շնորհակալ լինել թէ ինչքան մեծ ու նշանակալի է Մոնթէի, Սեֆիլեանի և ընդհանրապէս սփիւռքային հայ հարցի աւանդը արցախեան յողթանակի գործում: Այս և այլ հերոսական օրինակներն այսօր աւելի յաճախ են նշում ու շնորհակալ երկքաղաքացիութեան օրէնքի քննարկման շրջանակներում: Ինչքան էլ փորձենք շրջանցել, միեւնոյն է, այս օրէնքի քննարկման շրջանակներում բախուելու ենք ոչ երկրորդական հարցերից հետեւեալին, այն է՝ ո՞ր երկրի բանակում է ծառայելու հայ երկքաղաքացին. Հայաստանի, Սիրիայի, Լիբանանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի թէ, ասենք, Ռուսաստանի: Եթէ այսօր շրջանցենք այս հարցը և ճողոպրենք այս հարցի տրամաբանական պատասխանից, վաղն աւելի ու աւելի ենք միսրճուելու ու խճճուելու այս հարցի որոգայթներում: Մենք բոլորս ևս առաջին հերթին սփիւռքային թիւերը կ'ընդհանրենք ու գիտակցենք, որ երկքաղաքացիութիւնը ոչ միայն իրաւունք է, այլև պարտականութիւն,

ԻՆՉՊԵՍ ՄԻՇՏ՝ ՆԱԽԱԳԱՐԻ ԳՐՊԱՆՈՒՄ

Գաղտնիք է, որ Քոչարեանը չի կարողանում լսել իր հասցէին որեւէ քննադատական խօսք: Եթէ յիշում եք, «Ա.1+»-ը փակելուց երկու օր առաջ նա լրագրողներին ասաց, որ ոչ միայն այդ հեռուստաընկերությունները է իր հասցէին տհաճ բառեր լսում, այլև «Հ.1»-ի «Խորհրդարանական ժամի»՝ ընդդիմադիրների 3 ըոպէանոց յայտարարություններում: Ընդդիմադիր խմբակցությունների ներկայացուցիչների կծու-թթու խօսքերը ակնյայտօրէն ազդում էին պարոն Քոչարեանի նեարդերին: Եւ մարդկային տեսակետից այստեղ որեւէ արտառոց բան չկայ: Ուրքան գիտեմ, միայն թաւելումն էր սկսում ննջել, երբ մերձաւորներն իրեն կարողում էին իր հասցէին գրուած պատկերները: Կարծում էք ձորձ Պուշին կամ ժակ Շիրակին դո՞ւր է գալիս, երբ իրենց հրապարակաւ քննադատում են: Բնականաբար, ոչ: Բայց Պուշին և Շիրակի երկրներում ստեղծուած են պետական և հասարակական մեխանիզմներ, որոնք զրկում են նախագահներին իրենց քննադատողներին եթէր չտրամադրելու հնարաւորությունից: Մասնաւորապէս, Ֆրանսիայում և ԱՄՆ-ում չկայ այնպիսի Սահմանադրական դատարան, որը պատրաստ է բաւարարել նախագահի ցանկացած քմահաճօք:

Իսկ Հայաստանում կայ: Եւ երբ նախագահը դիմում է իր գրպանում գտնուող այդ դատարանին, որպէսզի վերջինս հնարաւորութիւն տայ Հանրային հեռուստատեսութեանը չցուցադրել Աժ-ում պատգամաւորների 3 ըոպէանոց յայտարարությունները, կառավարութեան հետ հարցուպատասխանը և «Խորհրդարանական ժամը», իսկ Հանրային

թեկնածու առաջ քաշել պաշտպանութեան նախարարին, այն պարզ պատճառով, որ ինքն իրեն առաջ չի քաշում: Բայց կայ մի ուշագրաւ նրբերանգ: Ռուսաստանի նախագահի երկրորդ թեկնածու է դառնում Իվանովը, ում որդին Մոսկուայում վրաերթի էր ենթարկել մի քաղաքացու: Իսկ մինչ այդ, երեւանում մի քաղաքացու վրաերթի էր ենթարկել Վարդան Օսկանեանի որդին: **ՅԱԿՈՒ ԲԱԴԱԼԵԱՆ «ԼՐԱԳԻՐ»**

ուղիորդին՝ չհեռարձակել Աժ նիստերը ուղիղ եթերով և այլն, ՄԴ-ն անմիջապէս «չեստ է տալիս» և կատարում է Ռ. Քոչարեանի հրահանգը: ՄԴ որոշումը, բնականաբար, տողորում է այդ դեկորատիւ «պետական ինստիտուտին» և անձամբ նրա նախագահին յատուկ երկարաբանութիւններով և երեսպաշտութեամբ: Նախորդ համարում մենք արդէն մէջբերումներ կատարեցինք այդ խուճուճ «իրաւական» ձեւակերպումներից: Հիմնաւորումների իմաստը հետեւեալն է. Ազգային ժողովն իր կանոնադրութեամբ իրաւունք չունի պարտադրել որեւէ լրատուամիջոցի (այդ թւում՝ Հանրային հեռուստատեսութեանը և ուղիորդին) հեռարձակել այս կամ այն նիւթը: Դա, իբր, խօսքի ազատութեան սահմանափակում է:

Ինչ խօսք, շատ յուզիչ հոգատարութիւն է խօսքի ազատութեան վերաբերեալ: Ուրեմն, հարկատուների միջոցներից սնուող «Հ.1»-ը (և «Հայլուրը»՝ մասնաւորապէս) միանգամայն ազատ է Քոչարեանին փառաբանելու և նրա ընդդիմախօսներին փնտրելու մէջ, բայց հենց որ գործը հասնում է պատգամաւորների յայտարարութիւնները հեռարձակելուն, ասա այստեղ է, որ ճնշում է նրանց ազատամտութիւնը: Իհարկէ, եթէ «Հ.1»-ի դեկավարութիւնն օժտուած լինէր նուազագոյն լայնախոհութեամբ և մասնագիտական պատուախնդրութեամբ՝ տրամադրել հաւասարակշռուած լրատուութիւն, որեւէ պարտադրանքի կարիք չէր լինի: Բայց քաղաքացիները, ըստ սահմանման, գուրկ են այդ յատուկութիւններից: Ելքը, հետեւաբար, պարտադրանքն է: Չէ՞ որ խօսքը գնում է, կրկնեմ, պետական լրատուամիջոցի մասին:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ «ԱՌԱԻՕՏ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ԱՌՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԲՁ ԱՐՇԱԿ ԳԱՋԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ՍԱՐԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

Ֆեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797- 6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

ՀԺԿ-Ն ԱՆՑԵԱԼԻՑ ԴԵՏԵՒՈՒԹԻՒՆՆԵՐ Կ'ԱՆԻ



Տեսարան մը ՀԺԿ-ի համագումարէն

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Փետրուար 17-ին տեղի ունեցաւ Հայաստանի Ժողովրդական կուսակցութեան (ՀԺԿ) համագումարը, որին մասնակցում էին միայն ՀԺԿ-ականներ, իսկ դահլիճը լեփ-լեցուն էր, անգամ դահլիճի օթեակը: Ինչպէս միշտ կուսակցութեան նախագահի մուտքը ողջունուեց երկարատեւ յոտնկայս ծափահարութիւններով:

Իսկ Ստեփան Դեմիրճեանն իր ելույթում խօսեց երկրում ստեղծուած անպատեխիութեան մթնոլորտի, ընտրակեղծարարներին պատասխանատուութեան չենթարկելու, «Ա1+» հետուստարնկերութեանը եթէր չվերադարձնելու, արդէն իսկ ընտրական գործընթացները խախտումներով տանելու մասին: Նա յայտարարեց, որ երկրում բարգաւաճում է կուռուպցիան ու յանցաւորութիւնը, բռնութիւնները դարձել են մեր իրականութեան անբաժանելի մասը:

Սկզբունքներից, գաղափարներից ու ծրագրերից են խօսում սկզբունք, գաղափար ու ծրագիր չունեցող մարդիկ: Իշխանութիւնն անընդհատ խօսելով ընդդիմութեան դաշտում դաշինքների չձեւաւորման մասին, ըստ Ստեփան Դեմիրճեանի, իրականում փորձում է պառակտել ընդդիմութիւնը: Ի դէպ, իր ելույթում Ստեփան Դեմիրճեանը չխօսեց դաշինքով կամ միայնակ ընտրութիւններին մասնակցելու նպատակայարմարութեան մասին: Միայն նկատեց, որ ի տարբերութիւն կողմիցիայի, 9 կուսակցութիւններից ձեւաւորուած

«Արդարութիւն» դաշինքը չբանդուեց: Եւ եթէ դաշինքի որոշ գործիչներ խախտել են սկզբունքները, դա չի նշանակում, թէ դաշինքի գաղափարը սխալ է եղել: «Ուղղակի պէտք է անցեալից հետեւութիւններ անել եւ առաջ գնալ», - ասաց Ստեփան Դեմիրճեանը:

Ստեփան Դեմիրճեանն իր ելույթն աւարտեց նրանով, որ 1998 թուականից իրենք բոլոր համապետական ընտրութիւններում յաղթել են եւ առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններին մասնակցելու են յաղթելու նպատակով:

Շատ աւելի յեղափոխական էին կուսակցութեան խորհրդի անդամների ելույթները. օրինակ, Շենգալիթի տարածքային կազմակերպութեան անդամ Բաբգէն արդեանը երիտասարդութեան անունից յայտարարեց, որ իրենք չեն վախենում իշխանական հետապնդումներից, որ իրենք պատրաստ են յանուն հայրենիքում ժողովրդավարութեան հաստատման պայքարել մինչեւ վերջ: Ապա կոչ արեց միայնակ գնալ ընտրութիւններին՝ առանց դաշինքների: Խօսեց նաեւ Ապրիլի 12-ին ինքնապաշտպանութեան նպատակով շրջով ոստիկանին հարուածած եւ ազատազրկման դատապարտուած էրգար Առաքելեանը, որը եւս վճռական էր տրամադրուած:

Համագումարում ընդունուեց բանաձեւ, վերընտրուեց նախագահ, ընտրուեց կուսակցութեան վարչութիւն, որն էլ կ'որոշի՝ առաջիկայ ընտրութիւնների գնալ միայնակ, թէ դաշինքով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՆԱՅՔ ՉԵՆ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՐՈՐԴ ԵՐԵՒԱՆ ՈՒՆԵՆԱԼ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Հայկանանց միայն 20 տոկոսն է ցանկանում ունենալ երրորդ երեխան, իսկ 90 տոկոսը միանշանակ որոշել է՝ չունենալ չորրորդը: Այս պարզուեղ է 6566 կանանց շրջանում անցկացուած «Հայաստանի Ժողովրդագրութեան եւ առողջութեան հարցերի հետազոտութեան» արդիւնքում:

«Մենք ամէն կերպ պէտք է խրախուսենք մեր կանանց, որ նրանք ունենան նաեւ երրորդ երեխան», - իր խօսքում կարեւորեց ՀՀ Առողջապահութեան փոխնախարար Թաթուլ Յակոբեանը Փետրուար 16-ին տեղի ունեցած սեմինարի ժամանակ՝ 2005թ. հետազոտութեան արդիւնքները ներկայացնելիս:

Հետազոտութիւնն անց են անցկացրել ՀՀ Առողջապահութեան նախարարութիւնը եւ Ազգային վիճակագրական Մառաշուկիւնը:

Հետազոտութեան նպատակն է վերհանել առողջապահական մի շարք խնդիրներ՝ նպաստելով դրանց լուծմանը: Ըստ Թաթուլ Յակոբեանի՝ հինգ տարուայ կտրուածքով ցուցանիշները բաւականին փոխուել են դէպի դրական:

Փոխնախարարի համար յատկապէս ուրախալի էր այն, որ մեր երկրում վիժումների նուազման միտում կայ, թէեւ դրանց մակարդակը դեռեւս բարձր է:

«Մենք պէտք է օգնենք մեր կանանց, որ նրանք վերատրադրուեն, այսինքն՝ ծննդաբերեն, սակայն պէտք է օգնենք նաեւ այն կանանց, ովքեր ցանկանում են գերծ մնալ անցանկալի յղիութիւնից», - կոչ է անում Թաթուլ Յակոբեանը եւ միաժամանակ աւելացնում, որ հայ կանայք յաճախ սխալ են օգտագործում հակաբեղմնաւորիչ միջոցները:

ԱՐԱՄ ՍԱՐԳՍԵԱՆ.

«ԵԹԵ ՄԻԱԴՐՈՒԹԵՆՔ՝ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ԱՌԱՋ ԱՐԴԵՆ ՅԱՂԹԵԼ ԵՆՔ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: «Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ, նախկին վարչապետ Արամ Սարգսեանը համոզուած է, որ միաւորուելու դէպքում հայաստանեան ընդդիմութիւնը կը յաղթի Մայիսի 12-ի խորհրդարանական ընտրութիւններում:

«Ընդդիմութիւնը պիտի միաւորուի», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ հարցազրոյցում ասաց Սարգսեանը: - «Չմիաւորուած ընդդիմութիւնը որոշակի կասկածներ է ստեղծում... Համոզուած ասեմ՝ եթէ միաւորուենք, ընտրութիւններից առաջ արդէն յաղթել ենք: Յաղթելու բանալին դրանում է... Միաւորուած ընդդիմութիւնը յաղթելու է մինչեւ ընտրութիւններ»:

Արամ Սարգսեանը, ով նոր է վերադարձել Միացեալ Նահանգներին, փոխանցեց, որ իր ունեցած հանդիպումների ժամանակ հաճելիօրէն զարմացել էր, որ ամերիկեան հեղինակաւոր վերլուծաբանները բարձր գնահատական են տալիս հայաստանեան ընդդիմութեանը՝ որպէս տարածաշրջանում «ամենա-

կազմակերպուած ու ակտիվ ընդդիմութիւն»:

Արամ Սարգսեանը ասաց, որ «Չանք չի ինչպէս, որպէսզի ընդդիմութիւնը ընտրութիւններին գնայ միասնական ճակատով», եւ արդէն նախաձեռնել է հանդիպումներ ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչների հետ:

Նա ասաց նաեւ, որ վերջնական չի համարում ընդդիմադիր ուժերից մի քանիսի յայտարարութիւնները, թէ ընտրութիւններին գնալու են միայնակ. - «Որեւէ յայտարարութիւն չեմ համարում վերջնական: Առաւել եւս՝ Ստեփան Դեմիրճեանի յայտարարութիւնը: Բացարձակ վերջնական չէ այն, ինչ ներկայացուած է: Կան կուսակցութիւններ, որոնք այդ յայտարարութիւնները չեն արել: Ես հակուած եմ համագործակցել ընդդիմադիր ամբողջ դաշտի հետ»:

Միացեալ Նահանգներում ունեցած հանդիպումների վերաբերեալ «Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդը ասաց, որ դրանք «չառ օգտակար հանդիպումներ էին»:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԼՐԱՏՈՒԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Վերջին օրերի ընթացքում իշխող կողմիցիայի անդամ չհանդիսացող կուսակցութիւններն հայաստանեան 4 հետուստարնկերութիւնով՝ «Հ1», «Շանթ», «Եկիր մեզի», «ԱԼՄ», եւ 2 ռադիոկայաններով՝ «Հանրային ռադիօ», «Ազատութիւն», աւելի շատ են լուսաբանուել՝ շուրջ 60 տոկոս, քան իշխող կողմիցիայի անդամ կուսակցութիւնները՝ ընդամենը 40 տոկոս: Այս մասին են վկայում ԵՄ շաղկուպեմբ Լրատուամիջոցների կովկասեան ինստիտուտի անցկացրած մոնիտորինգի առաջին փուլի արդիւնքները:

Օրինակ՝ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան լուսաբանումն այս վեց լրատուամիջոցներում ընդհանուր առմամբ կազմել է 2 տոկոս:

Ընդհանուր առմամբ փորձագէտները գոհ են մոնիտորինգի արդիւնքներից՝ համարելով, որ նշուած վեց լրատուամիջոցներն այս ընթացքում իրենց եթերում կարողացել են ինչ-որ կերպ բազմակարծութիւն ապահովել՝ գրեթէ հաւասար պայմաններ ստեղծելով

բոլոր կուսակցութիւնների համար: Սակայն, մի քանի կուսակցութիւնների նկատմամբ եղել է առանձնաչափ մօտեցում: Մասնաւորապէս այդ արտաչափուել է «Հ1»-ի «Հայուր» եւ «ԱԼՄ»-ի «Օրը» լրատուական ծրագրերում: Օրինակ՝ «Հայուր»-ն իշխող կողմիցիայի մաս կազմող կուսակցութիւնների աւելի շատ է անդրադարձել՝ շուրջ 75 տոկոս:

Այն հարցին, թէ նման «նպատոււոր հեռուստառադիոլուսաբանման» ժամանակ ինչո՞ւ են ընդդիմադիր կուսակցութիւնները բողոքում իրենց եթեր չտրամադրելուց, Նինա Իսկանդարեանն պատասխանեց. «Մենք այստեղ ունենք մոնիտորներ, որոնք վաչրկեաններով հաշուում են բոլոր եթերաժամերը: Ընտրական փուլում առանձին կուսակցութիւնների համար կը ներկայացնենք առանձին տուեալներ, որ իւրաքանչիւր կուսակցութիւն տեսնի՝ որ օրը, որ ալիքով ինչքան է լուսաբանուել: Մենք ունենք տեսաբերիչներ, որոնք պահպանում են այստեղ. ով ցանկանայ, կարող ենք ցոյց տալ դրանք»:

ՀՐԱՆԴ ԽԱՉԱՏՐԵԱՆԸ ՄՏԱԲ ՄԻՄ-Ի ԳՐԱՍԵՆԵԱԿ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Դատական ակտերի հարկադիր կատարման աշխատակիցներն Փետրուար 20-ին Չարդեցի ՍԻՄ գրասենեակի դռների կողպէքները: ՍԻՄ հիմնադիր Հրանդ Խաչատրեանի առջեւ վերջապէս բացուեցին ՍԻՄ դռները, սակայն ի գարմանս ներկաների, ներսում ոչ ոք չկար: Եւ սա այն պարագայում, երբ երէկ Հայկ Բաբուխանեանը ասուլիսի ժամանակ ասել էր, թէ մեծ ակցիա են անելու՝ թոյլ չտալով Հրանդ Խաչատրեանին մտնել ՍԻՄ: «Հիմա նախագահի առանձնասենեակի երկաթեայ պահարանը, որը ես թողել եմ այստեղ, որի մէջ կար փաստաթղթեր եւ որոշ անձնական թղթեր, իր տեղում չէ, պէտք է նայել՝ կա՞յ այլ սենեակներում, թէ ոչ: Բացակայում է գրադարանը, գրապահարանը, բոլորը տեղում չէ: Հերթով բացում ենք դռները, գոյքագրում են, ֆիքսում է՝ ինչ վիճակում է հիմա», - լրագրողներին տեղեկացրեց Հրանդ Խաչատրեանը: Նա վստահեցրեց, որ ամէն ինչ կ'անեն, որպէսզի Ուրբաթ օրը կրկին լոյս տեսնի «Իրաւունք» թերթը:

ՀԱՄԱՁԱՅՆԱՑՈՒԵԼՈՒ Է ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՍԱՅՄԱՆԸ

Փետրուարի 19-21-ը Թբիլիսիում կայացաւ Հայ-վրացական պետական սահմանի սահմանագծման եւ սահմանազատման յանձնաժողովի նախագահներ՝ ՀՀ ԱԳ փոխնախարար Գեղամ Ղարիբջանեանի եւ վրաստանի ԱԳ փոխնախարար Գէորգի Մանջգալաձէի հանդիպումը: Համանախագահները քննարկել են հայ-վրացական պետական սահմանի որոշ հատուածների համաձայնեցման հետ կապուած հարցեր:

Հայ-վրացական պետական սահմանի սահմանագծման եւ սահմանազատման յանձնաժողովի նախագահներ՝ ՀՀ ԱԳ փոխնախարար Գեղամ Ղարիբջանեանի եւ վրաստանի ԱԳ փոխնախարար Գէորգի Մանջգալաձէի հանդիպումը: Համանախագահները քննարկել են հայ-վրացական պետական սահմանի որոշ հատուածների համաձայնեցման հետ կապուած հարցեր:

ԼՈՒՐԵՐ

«ԷՔՈՆՈՍԻՍԹ»-Ը ԹՈՒՐՔԻԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ե ՏԱԼԻՍ ՕՐԵՆՍԳՐՔԻՑ ԶԱՆԵԼ 301-ՐԴ ՅՕԴՈՒԱԾԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Բրիտանական «Էքոնոմիսթ» հե-
ղինակաւոր հանդէսը «Հայերի հար-
ցով նոր բանավէճը կարող է փճաց-
նել թուրք-ամերիկեան յարաբե-
րութիւնները» վերնագրով յօդ-
ուած է հրատարակել, որում որպէս
հնարաւոր ելք ԱՄՆ-ի Գոնկրէսում
ներկայացուած Հայոց Յեղասպա-
նութեան բանաձեւի հետ կապուած
թնճուկից մատնանշում է թուրք-
իւրի քրէական օրէնսգրքից
տիրահոսակ 301-րդ յօդուածը «դէն
նետելը»:

«Ամերիկեան իրար յաջորդող
վարչակազմերը խափանել են ցե-
ղասպանութեան բանաձեւերի ըն-
դունումը՝ փաստարկելով, թէ
թուրքիան անչափ թանկ դաշնա-
կից է՝ նրան կորցնելու համար:
Օգնել են իսրայէլի հետ թուրքիա-
յի շեղմ կապերի համար երախտա-
պարտ հրէական կազմակերպու-
թիւնները: Սակայն իրավիճակը
փոխուել է», - ընդգծում է «Էքո-
նոմիսթ»-ը:

Յօդուածում թուարկուած են
այդ փոփոխութեան պատճառները՝
սկսած 2003 թուականի Մարտին
թուրքիայի տարածքով իրաք
մուտքը ամերիկեան զօրքերին ար-
գելելուց, Իրանի, Սիրիայի եւ Հա-
մաս խմբաւորման հետ թուրքա-
կան կառավարութեան բանակցու-

թիւններից մինչեւ հիւսիսային
իրաքում քուրդ գրոհայինների դէմ
սեփական ուժերով պայքարելու՝
թուրքիայի սպառնալիքները:

Յօդուածագիրը նշում է, որ
ԱՄՆ-ի Գոնկրէսի Ներկայացուցիչ-
ների պալատի նորընտիր խօսնակ
Նէնսի ֆելտսին անցած շաբաթ
հրատարակել է ընդունել թուրքիա-
յի արտգործնախարար Աբդուլա
Գիւլին:

«Ինչ անել: Որպէս սկիզբ՝
թուրքիան կարող է դէն նետել
«թուրքական ինքնութիւնը վիրա-
ւորելը» քրէական յանցանք դարձ-
նող թիւ 301-րդ յօդուածը Գրէա-
կան օրէնսգրքից: Ինչպէս Հրանդ
Դինքն էր փաստարկում, թուրք-
իւրի անցեալի յանցանքների ճա-
նաչմանը լաւագոյնս կը նպաստի
թուրքերի միջեւ անկաշկանդ բա-
նավէճը, այլ ոչ թէ քուէներ հայցող
օտարերկրեայ քաղաքական գոր-
ծիչները», - գրում է «Էքոնո-
միսթ»-ը:

«Յուսադրող է, երբ պարոն
Գիւլը գանգատում է՝ «թուրքիա-
յից դուրս մտածում են, թէ ձեր
բերանը բացելու համար կարող էք
բանտ նետուել», - գրում է բրիտա-
նական հանդէսը՝ ամփոփելով. -
«Աւելին, ինչպէս ողբերգականօրէն
բացայայտեց պարոն Դինքը՝ կա-
րող էք սպանուել»:

ԶԱՄԱՆԱԽԱԳԱՅՆԵՐԸ ԿՈՂՄԵՐԻՆ ՅՈՐԴՈՐՈՒՄ
ԵՆ ՁԵՌՆՊԱՅՄԱԿ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ
ՎԱԱՍ ԶԱՍՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանա-
խագահները հայկական եւ աւրաբե-
ճանական կողմերին յորդորում են
ձեռնպահ մնալ այնպիսի գործո-
ղութիւններից, որոնք կարող են
վնաս հասցնել դարաբաղեան խնդրի
կարգաւորման բանակցային գոր-
ծընթացում վերջին ժամանակաշր-
ջանում արձանագրուած դրական
տեղաշարժերին:

Նման նախաձեռնութիւնների
թուում համանախագահները նշում
են նաեւ ՄԱԿ-ի Գլխաւոր ասամբլ-
իայում արձարժուած հարցադրում-
ները:

Համանախագահները համա-
տեղ յայտարարութիւնում, որը
տրամադրել են Հայաստանում
Ֆրանսիայի դեսպանատնից, յոյս
են յայտնում, որ Հայաստանի եւ
Ատրպէյճանի արտգործնախարար-
ները կը հանդիպեն մօտ ապագա-
յում՝ «յաղթահարելու ապագայ

կարգաւորման հիմնարար
սկզբունքներին առնչուող առկայ
տարածայնութիւնները»:

Ռուսաստանից համանախա-
գահ Եուրի Մեդուեւսկովը, ֆրանս-
իացի համանախագահ Պէրնար
Ֆասիէն եւ ամերիկացի համանա-
խագահ Մեթիւ Բրայզան, ինչպէս
նաեւ ԵԱՀԿ-ի գործող նախագահի
անձնակազմի ներկայացուցիչ ԱնՋէյ
Կասպրիզիկը Փետրուարի 14-ին եւ
15-ին հանդիպել են Փարիզում:
Այնտեղ նրանց հետ հանդիպել է
նաեւ Հայաստանի արտաքին գոր-
ծերի նախարար Վարդան Օսկան-
եանը:

Ատրպէյճանի արտգործնախա-
րարութիւնը հաղորդել էր, որ
արտգործնախարար էլմար Մա-
մեդեարովը ուղեկցում է պաշտօ-
նական այցով Գերմանիայում
գտնուող նախագահ Իլհամ Ալիեւին
եւ Փարիզ մեկնելու մտադրութիւն
չունի:

ԶԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴԴԻՍԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԵ

Շարունակուած էջ 1-էն
ցոյց չտալ»:

Մանուկեան աւելցուց, որ
հակասահմանադրական է նոյ-
նինքն Սահմանադրական դատա-
րանի որոշումը: «Իհարկէ, յատուկ
էր արուած՝ կապուած 2007 եւ 2008
թուականների ընտրութիւնների
հետ», - ըսաւ ԱժԲ-ի նախագահը:

Հայաստանի ժողովրդական
Կուսակցութեան (ՀԺԿ) նախագահ,
«Արդարութիւն» խմբակցութեան
ղեկավար Ստեփան Դեմիրճեան
նոյնպէս համոզուած է, որ Սահմա-
նադրական դատարանի որոշումը
յատուկ միտում կը հետապնդէ:

«Մեծ հաշուով, թէ այս
որոշումը, թէ վճարովի եթերի
թանկացումը ակնյայտօրէն նպա-

տակ են հետապնդում սահմանա-
փակելու առաջին հերթին ընդ-
դիմութեան՝ քարոզչութեան հնա-
րաւորութիւնները նախընտրական
շրջանում, նաեւ՝ նախագահական
ընտրութիւններից առաջ», - նոյն
ուստիակային յայտնեց Դեմիրճե-
անը: - «Սա ցոյց է տալիս, որ
վախենում են, որ ընդդիմութիւնը
լայնածաւալ քարոզչութիւն իրա-
կանացնի»:

Խորհրդարանէն ներս Հան-
րապետական կուսակցութեան
խմբակցութեան ղեկավար Գալուստ
Սահակեանը, մինչդեռ, դրական
գնահատեց Սահմանադրական դա-
տարանի որոշումը:

«Ինչպէս բոլոր կառույցները,
այնպէս էլ Խորհրդարանը կարող է
պայմանագրային կապի մէջ լինել

«ԱՅԼԸՆՏՐԱՆՔ»-Ը ՍԿՍԵՑ ԶԱՆՐԱԶԱԲԱՆԵՐԻ
ՇԱՐՔԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-
ՑԷ»:
19 տարի առաջ
այս օրը՝ Փետրուարի
20-ին, Օպերայի եւ բա-
լետի շէնքին յարող տա-
րածքը լեփլեցուն էր եւ
մարդկանց միաւորել էր
մէկ գաղափարի շուրջ.
ապրել ազատ եւ ան-
կախ: Այդպէս սկսուեց
Ղարաբաղեան շարժու-
մը: 19 տարի յետոյ,
այսօր Ազատութեան
հրապարակում նորից
հաւաքուել էին մար-
դիկ, ինչպէս նշեցին
նրանք, միեւնոյն գա-
ղափարների համար
պայքարելու վճռականութեամբ:
Այսպէս մեկնարկեց «Այլընտրանք»
հասարակական քաղաքական նա-
խաձեռնութեան հանրահաւաքնե-
րի շարքը: Որոշ գնահատականնե-
րով հանրահաւաքին եւ դրան
հետեւած երթին մասնակցեց մին-
չեւ 5 հազար մարդ:



Տեսարան մը «Այլընտրանք»-ի կազմակերպած ցոյցէն

Հանրահաւաքին ներկայ էին
նաեւ մի շարք կուսակցութիւնների
ներկայացուցիչներ: Մասնաւորապէս,
«Նոր ժամանակներ»-ը եկել էին
իրենց կուսակցական դրոշներով,
մասնակցում էին ԱժԲ-ի, Հայաս-
տանի Պահպանողական կուսակցու-
թեան, Դեմոկրատական-Հնչակեան
Կուսակցութեան, ՀՀԾ, «Հանրապե-
տութիւն» կուսակցութեան եւ ԱժԴ-
ի ներկայացուցիչները:

Հանրահաւաքի ընթացքում կոչ
արուեց, որպէսզի հանրահաւաքի
մասնակիցները մինչեւ յաջորդ հան-
րահաւաքը փոքրիկ հանրահաւաք-
ներ կազմակերպեն իրենց շէնքե-
րում, տներում, տրանսպորտում,
այսինքն՝ ամէնուրեք, որտեղ լի-
նում են: «Այլընտրանք չի լինի
մինչեւ դուք՝ ձեր գաղափարներով
չմիանաք մեզ», - ասում էին հան-
րահաւաքի կազմակերպիչները: Այս-

պիսի աշխատանքով նրանք նախա-
տեսում են, որ յաջորդ հանրահա-
ւաքին երկրի տէր դարձած մասնա-
կիցների թիւը կը կրկնապարկուի,
այնուհետեւ կ'եռապատկուի եւ այդ-
պէս շարունակ:

Իսկ յաջորդ հանրահաւաքը
նախատեսուած է անցկացնել Մար-
տի 2-ին ժամը 16:00-ին: Բայց այդ
անգամ «Այլընտրանք»-ի կողմնա-
կիցները հաւաքուելու են Մատե-
նադարանին յարող տարածքում,
քանի որ նոյն օրը Օպերայի եւ
բալետի շէնքում տեղի է ունենալու
«Արշակ Երկրորդ» օպերայի մեծ
փորձը: Յանուն արուեստի «Այ-
լընտրանք»-ի մասնակիցները որո-
շեցին տարածքը զիջել: Ի դէպ,
իշխանութիւնները, հաւանաբար
տեղեակ լինելով ընդդիմադիրնե-
րի ցանկութեանը՝ տէր դառնալ
Ազատութեան Հրապարակին, նա-
խաձեռնել են նոր միջոցառում.
Մարտի 8-ից սկսած յայտարար-
ուելու է 70-օրեայ համերգաշար:
Սակայն դա էլ չզայրացրեց ցուցա-
բարներին, որոնք մեծ պատրաս-
տակամութիւն յայտնեցին նաեւ
այդ դէպքում զալ Ազատութեան
Հրապարակ:

ՕՐԸԱՆ ՓԱՍՏԻՔԸ ՇՐՈՒՄՈՒՄ Ե
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ՇԵՏ
ՎԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻՑ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Նոպէլեան մրցանակի դափնեկիր
Օրհան Փամուքը հրատարակել է իր
վերջին գրքի գովազդային այցե-
լուծութիւններից թուրքական տար-
բեր քաղաքներ, որտեղ նախատես-
ուած էին հանդիպումներ ընթեր-
ցողներին հետ:

«Այրիշ Թայմս» թերթի փո-
խանցմամբ, Փամուքը մտաւախու-
թիւն ունի, որ կարող է ահաբեկ-
չական յարձակման ենթարկուել
ազգայնականների կողմից:

Մտահոգութիւն են առաջաց-
նում նաեւ թուրքիայում անցկաց-
ուած վերջին հարցախոյզի ար-
դիւնքները: Պարզուած է, որ ծայրա-

յեղ աջակողմեան Ազգային շարժու-
մը Նոյեմբերին կայանալիք ընտ-
րութիւններից յետոյ թուրքիայի
խորհրդարանում կարող է դառնալ
երրորդ ամենահզօր կուսակցութիւնը:

Բացի այդ, հարցախոյզի ար-
դիւնքները վկայում են, որ մարդ-
կանց մեծ մասը դէմ է քրէական
օրէնսգրքի 301 յօդուածի վերաց-
մանը: «Թուրքական ինքնութիւնը»
վիրաւորելու համար քրէական պա-
տիժ նախատեսող այս յօդուածով
մեղադրանք էր առաջադրուել ան-
ցած ամիս իսթանպուլում սպանն-
ուած Հրանդ Դինքին, ինչպէս նաեւ
Օրհան Փամուքին ու մի շարք
թուրք մտաւորականների:

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ

Շարունակուած էջ 1-էն

նելով Գերմանիոյ արտաքին գործոց
նախարարը յոյս յայտնեց, որ անոնք
կ'անցնին ժողովրդավարութեան չա-
փանիչներուն ու սկզբունքներուն
համապատասխան:

Իսկ Օսկանեանին ուղղուած
այն հարցին, թէ ինչ երաշխիք-

ներ կրնայ տալ իշխանութիւնը,
որ յառաջիկայ ընտրութիւնները
կ'անցնին ժողովրդավարական չա-
փանիչներով, ան ըսաւ. - «Երաշ-
խիքը կարող է լինել միայն ու
միայն իշխանութիւնների եւ բո-
լոր քաղաքական ուժերի նուիրու-
մը՝ անցկացնելու ազատ եւ արդար
ընտրութիւններ»:

ցանկացած հեռուտարնկերութեան
հետ», - լրագրողներու հետ հան-
դիպման ժամանակ ըսաւ Սահակ-
եան: - «Եթէ մենք ընդունում ենք

հետեւեալ բանաձեւը, որ մամուլը
անկախ է եւ ազատ է, ուրեմն
մամուլը ինքը պիտի որոշի իր
գործունէութիւնը»:

ՎԱՐՂԱՆԱՆՑ ՏՕՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍԲ. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ



Սրբոց Վարդանանց տօնի արարողութիւնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետութեամբ

Փետրուարի 15-ին՝ Սրբոց Վարդանանց տօնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Մայրապետ Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետութեամբ մատուցուեց Սբ. Պատարագ: Պատարագին էր Գէւորգեան Հոգեւոր ձեմարանի տեսուչ Տ. Վազգէն վարդապետ նախնանք:

Սրբազան արարողութեանը ներկայ էին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու Հայաստանեան թեմերի առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, Գէւորգեան Հոգեւոր ձեմարանի դասախօսներ եւ սաներ:

Յաւարտ Սբ. Պատարագի Վարդանանց խորհրդին անդրադարձաւ Հոգեշնորհ Հայր Սուրբը: «Մենք յիշում եւ ամէն անգամ տօնախմբում ենք Վարդանանց տօնը եւ պիտի նշենք, քանի դեռ երկրպագուի վրայ մէկ կայ կա, որովհետեւ սա մեր ինքնութեան, մեր լինելիութեան տօնն է: ...Փառք Աստուծոյ, այսօր խաղաղութիւն է, եւ կարիքը չկայ, որ մեր կեանքը տանք մեր հաւատի եւ մեր Հայրենիքի համար: Սակայն մահուան հաւասար կարեւոր է նաեւ իմանալ, թե ինչպէս ենք ապրում. լի յոյսով առ Տէր, լի հաւատքով առ ապագան», - նշեց Հայր Վազգէն իր խօսքում:

Ապա Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անուանակոչութեան օրուայ առիթով իջման Սբ. Սեղանի առջեւ կատարուեց Հայրապետական մաղթանք՝ Նորին Սրբութեան քաջառողջութեան ու կենաց արեւելատեման եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայծառութեան համար:

Սբ. Պատարագից յետոյ Գէւորգեան Հոգեւոր ձեմարանում տեղի ունեցաւ հանդիսութիւն՝ նուիրուած Սբ. Վարդանանց անմար յիշատակին: Հանդիսութիւնը բացեց Գէւորգեան Հոգեւոր ձեմարանի փոխտեսուչ Տ. Սահակ վարդապետ Մաշալեանը:

Վարդանանց նուիրուած բանաստեղծութեամբ հանդէս եկաւ քաղ. դիտ. դոկտոր Արմէն Այվազեանը: Շարականների եւ հայրենասիրական երգերի կատարումներով ելույթ ունեցան Գէւորգեան Հոգեւոր ձեմարանի երգչախումբը եւ ՀԲԸՄ - Մայր Աթոռի Նորքի հայորդաց տան «Հայկազունք» համոյթը: Երգչուհի Լեյլա Սարիբեկեանի կատարմամբ առաջին անգամ հնչեց նոր հեղինակուած՝ «Վարդանանք հայոց» երգը (խօսքերի հեղ. Արփինէ Թաղեւոսեան):

Հանդիսութիւնը եզրափակուեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեան


խօսքով: «...Վարդանանց տօնը դաւեր շարունակ ուղեկցել է մեր ժողովրդին: Մեր ժողովուրդն ապրել է Վարդանանց խորհրդով: Այսօր էլ մենք խօսում ենք այդ խորհրդի մասին, իբրեւ մեր գոյութեան հիմնական երաշխիքի, իբրազգային մեր ոգու եւ դիմագծի պահպանութեան առհավատեցալի: Վարդանանց խորհուրդը Վարդանանց ոգու մէջ է: Դա վասն հայրենեաց եւ վասն հաւատոյ իրենց ունեցած սէրն էր», - նշեց Ամենայն Հայոց Հայրապետը:

Նորին Սրբութիւնն անդրադարձաւ յատկապէս վերջին շրջանին հնչող կոչերին՝ դառնալու դէպի մեր ազգային արմատները, եւ իբրեւ այդ դարձի ուղի հանրութեանը տարբեր անհատների կողմից ներկայացուող զանազան արժէհամակարգերին: Վեհափառ Հայրապետը, սակայն, նկատեց, որ այդ ճանաչողութիւնը եւ դարձը դէպի ազգային արմատները ճշմարտապէս եւ հարգատուէն արտացոլուած է Վարդանանց ոգու մէջ: «Եթէ մենք ուզում ենք ճանաչել մեր արմատները, ճանաչել մեր ինքնութիւնը, պետք է հաւատարիմ մնանք մեր սիրոյ մէջ առ Աստուած եւ առ Հայրենիք: Եւ այդ սերը դարձնենք մեր կեանքի շարժիչ ուժը, մեր ինքնութիւնը նորոգող ուժը, մեր ազգը առաջնորդող ուժն ու գործութիւնը», - ասաց Հայոց Հայրապետը:

Գարեգին Բ Կաթողիկոսը կարեւոր նկատեց նաեւ, որ Վարդանանց տօնի ոգեկոչումը վերստին համազգային բնոյթ ստանայ, այն նշուի թե՛ կրթական հաստատութիւններում եւ թե՛ իւրաքանչիւր հայորդու հարկից ներս, դառնայ գործութեան ու ներշնչումի, մեր կեանքի եւ աշխատանքի անհատական եւ համազգային յաղթութեան մի անսպառ ակունք: «Եթէ ուզում ենք, որ աղանդաւորներ տեղ չունենան մեր կեանքից ներս, ուրեմն Վարդանանց ոգին պիտի կերտենք իւրաքանչիւր հայորդու եւ՝ սրտում եւ՝ մտածողութեան մէջ: Եթէ ուզում ենք, որ Հայրենիքն առաջընթաց եւ բարգաւաճ կեանք ունենայ, երջանկութիւնն ուղեկից դառնայ մեր ժողովրդին, եթէ ուզում ենք հեռու վանել մեզանից պարտաւորականութեան գիտակցութիւնն ու մտածողութիւնը, եթէ ուզում ենք քաջ սրտով մեր գլուխն ամէն երեկոյ բարձին դնել, ուրեմն պետք է Վարդանանց այդ ոգին ապրեցնել մեր մէջ, մեր ժողովրդի իւրաքանչիւր զաւակի հոգուց ներս», - ասաց Ամենայն Հայոց Հայրապետը:»

ԱՐՔՈՒԹԵԱՆ ՊԱՏԻՒ՝ ԱՐԻՍ, ՍԵԼԱՆ ԵՒ ՎԻՉԷՆ ՍՐԲԱԶԱՆՆԵՐՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Մայրապետ Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական օրհնութեամբ արքութեան պատիւ է շնորհուել Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Միջ-եկեղեցական եւ արտաքին յարաբերութիւնների վարիչ Գերաշնորհ Տ. Արիս Եպիսկոպոս Շիրվանեանին, Գերաշնորհ Տ. Սեւան Եպիսկոպոս Ղարիբեանին (Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւն) եւ ԱՄՆ Արեւելեան թեմի Միջ-եկեղեցական յարաբերութիւնների պատասխանատու եւ Ամերիկայի Եկեղեցիների Խորհրդի Նախագահ Գերաշնորհ Տ. Վիգէն Եպիսկոպոս Ալքազեանին՝ ի գնահատութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու բերած իրենց անսակարկ բոլորանուէր ծառայութեան եւ տարիների վաստակի:



Գերաշնորհ Տ. Վիգէն Եպիսկոպոս Ալքազեան նր՝ ի պայծառութիւն Հայաստանեայց Առաքելահաստատ Սուրբ Եկեղեցու:

Թող Բարձրեալն Աստուած քաջառողջ եւ արեւշատ կենաց օրեր եւ հոգու անսպառ կորով պարգևի Արիս, Սեւան եւ Վիգէն Սրբազաններին՝ Տիրոջ Սուրբ Աջի հովանու ներքոյ եկեղեցաշէն եւ ազգօգուտ ձեռքբերումներով շարունակելու իրենց առաքելութիւնը:



Հ.Բ.Ը.Մ. ԱՐՏԱՒԱԶՂ ԹԱՏԵՐԱՆՈՒՄԸ
Կը ներկայացնէ

Արորսուած Էսանակ մը

Կապակերպութիւն 2 արարով

Հեղինակ՝ ԻՈՆ ԳԱՐԱԾԻԱԼԷ
Բեմադրիչ՝ ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ

Շաբաթ, Փետրուար 24 - Ժամը 8:00-ին
Կիրակի, Փետրուար 25 - Կալա - Ժամը 5:00-ին, \$50
Շաբաթ, Մարտ 3, 10, 17, 24, 31 Ժամը 8:00-ին
Կիրակի, Մարտ 4, 11, 18, 25 Ժամը 6:00-ին
Կիրակի, Ապրիլ 1, Օրէնճ Գառնիթի, <small>Tel. 714-898-9057 Tel. 949-786-0746</small>

ՍՈՒՏՔԻ ՆՈՒԷՐ \$20

Հ.Բ.Ը.Մ. Մանուկեան Կեդրոնի
Արտաւազդ Թատերասրահ
2495 E. Mountain Street, Pasadena

— Տոմսերը կարելի է պատնայ —

- Հ.Բ.Ը.Մ. Գրասենեակ 626-794-7942
- Ապրիլ Գրատուն 818-243-4112 • Պերճ Գրատուն 818-244-3830
- Հ.Բ.Ը.Մ. Մանուկեան-Տեմիքճեան Վարժարան 818-883-2428

Մարտ 3-ի ներկայացումը կը հովանաւորէ Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը Տոմսերու համար հեռաձայնել՝ (818) 391-7938 * (818) 502-3233

ԱՐԳԱՅԻՆ

ՍԱՐԳԻՍ ՏԻՐՈՒՆԻ ԿԵԱՆՔԸ

«ՎԱՏ Է ԱՆ, ՈՐ ՃՇՄԱՐՏԱԽՕՍԸ ԼՈՒՅՆԵԼՈՒ ՎԱՄԱՐ ԳՆԴԱԿ Կ'ԱՐՁԱԿԷ»

Սարգիս Տիրունիի հայրը եղած է բնիկ սեպի, Յարութիւն Քեռէրեան որ իր ժամանակին հանդիսացած է որակեալ ուսուցիչ մը:

1913ին պատերազմի նախօրեակին, ան սպաննուեցաւ անձանօթ պայմաններու մէջ:

Այդ շրջանի Սիսի հայութիւնը իր մշակութային թմբիրէն զարթնումը մեծ չափով կը պարտի Յարութիւն Քեռէրեանի եւ Միացեալ ընկերութեան օժանդակութեան:

Յարութիւն եւ իր մտն Քեռէրեան ամուլը կ'ունենար հինգ զաւակներ՝ Սարգիս (1989), Գիրգոր (1900), Էլմաս (1903), այժմ կողակից ընկ. Յովհաննէս Լաչինեանի, Յակոբ, Մելքոն (1909) եւ Նուպար (1914):

Ատոնցմէ Սարգիսն է որ հնարաւորութիւն ունեցաւ բարձրագոյն ուսման հետեւելու:

Սարգիս օժտուած էր բնական սուր լիշողութեամբ եւ արտակարգ տրամաբանութեամբ:

1903ին կը յաճախէ Սիսի վարժարանը:

Կազմուած քով գէր, խոշոր սակայն բեղուն գլուխով, դեղձան մագերով, մանկական ժպիտը այտերուն վրայ անպակաս պատանի մըն էր Սարգիս Քեռէրեան:

Սահմանադրութեան շրջանին ազատութիւններէն օգտուելով Սիս կ'այցեւին բազմաթիւ մտաւորականներ, գործիչներ: Այդ թուին հոն կը հանդիպի նաեւ ողբացեալ գրագետ ընկ. Սմբատ Բիւրատ, որ երբ դպրոց կ'այցելէ, ուսուցիչը սեւ պատին առջեւ կը հանէ Սարգիսը: Վերջինս անսխալ եւ մաքուր գիրով կը գրէ յարգելի հիւրին կողմէ տրուած թրքերէն նախադասութիւն մը: Սմբատ Բիւրատ հիացած փոքրիկ Սարգիսի ուշիմութեան վրայ, կ'առաջարկէ նոյն նախադասութիւնը վերածել հայերէնի եւ ապա՝ Ֆրանսերէնի: Սարգիս կը կատարէ երկու առաջարկները: Սմբատ Բիւրատ, որ Ձէյթունի մէջ Միացեալ ընկերութեան հովանաւորութեամբ իբրեւ կրթական մշակ ծառայած էր ութսունական թուականներուն, հրապարակաւ կը խոստովանի, թէ կիլիկեցի այդ մանուկը տէր էր արտակարգ ուշիմութեան եւ հետեւեալը ընդունակ զարգացումի:

Իր մանկական հասակէն ընկ. Սարգիս ընտրած էր մտաւորականութեան եւ ծառայութեան ճամբան, իր հօր ճամբան:

Դաշնակցութիւնը Սահմանադրութեան շրջանին մուտք գործեց Սիս, անկէ առաջ միմիայն Հնչակեաններն էին որ կը գործէին ո՛չ միայն Սիսի, այլ Կիլիկիոյ ու Փոքր



Հայքի բոլոր քաղաքներուն եւ գիւղերուն մէջ:

1909ին Սիսի թաղական խորհուրդը կազմուած էր Հնչակեան կուսակցութեան անդամներէ: Այդ տարին որոշուած էր վարժարանին մէջ ներկայացնել «Սեւ Հողերը» թատերերգութիւնը:

Սարգիս ինքն ալ փափաքած էր դեր մը վերցնել եւ հօրը միջոցաւ ընկեր Յարութիւն Պալեանի դիմած է, որ այդ շրջանն Սիսի Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան Պատանեկան Միութեան ղեկավարն էր:

Իր մատող տարիքը նկատի առնելով, կ'որոշէն որ ան բաժակաճառ մը արտասանէ: Իր «Սարգիս Տիրունի կամ Եղբայրասպան Գնդակը» հատորին 30րդ էջին մէջ ընկեր Պալեան կը նշէ.՝

«Հոն է որ խօսելու, ըմբռնելու եւ հասարակական գործերով զբաղուելու իր թաքուն ձիրքերը երեւան ելան: Իր այդ առաջին արտասանութեամբ Սարգիս համակ եռանդ զգեցած, հոետորական շարժումներով եւ թոնով, յատակ առողանութեամբ եւ արտասանուած նիւթը իւրացնողի երեւոյթով ծափեր խլեց ներկաներէն»:

Այն օրէն իր մէջ ծնունդ առած էր անդիմադրելի հակում մը դէպի Ս.Դ. Հնչակեան կուսակցութիւնը: Սարգիս Տիրունի իր մէջ կը զգար կուսակցական հզօր խմորում մը: «Այն օրէն սկսեալ իբրեւ Ս.Դ. Հնչակեան Ուսանողական Միութեան անդամ, մասնակից կ'ըլլար բոլոր հաւաքոյթներուն:

ՏԻՐՈՒՆԻ

ՏԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

1912ին թերաւարտ Ազգային վարժարանէն, Տիրունին կը ղրկուի Տարսնի Սմոլ Գոյէճը:

Սիսի վարժարանը չէր բաւարարէր ուսման ծառաւ երիտասարդներուն, որոնք ստիպուած էին Պոլիս կամ շրջանները գտնուող երկրորդական վարժարաններ յաճախել:

Համաշխարհային պատերազմի ուրուականը արգիլեց սակայն որ Տիրունին իր ուսումը ամբողջացնէ: Ան ստիպուեցաւ դիմել ինքնաշխատութեան:

Սարգիս Տիրունի ստիպուեցաւ վերադառնալ իր ծննդավայրը՝ Սիս, մինչ այդ Խարբերդէն Սիս վերադառնալու համար ճամբայ ելած հայրը կը խողովողուէր իթթիհատականներուն կողմէ:

Պատանի Սարգիս իր հայրենակիցներուն հետ ստիպուեցաւ տարագրութեան ճանապարհը բռնել: Ան իրեն բախտակիցներուն հետ կը հասնի Սուրիա, Դամասկոսի Գաթանա գիւղաքաղաքը, եւ հակառակ իր վաղ տարիքին, հազիւ 18, յաջողեցաւ բարեկամանալ տեղւոյն գիւնուորներուն հետ, անոնց ընտանիքներուն նամակներ գրել յանձն առնելով:

1918ին վերապրողներուն հետ Տիրունի եւս կը վերադառնայ Սիս, աւելի փորձառու եւ աւելի ատակ իր շրջապատին եւ իր կուսակցութեան օգտակար հանդիսանալու մտադրութեամբ խանդավառ:

Որպէս Ազգ. Միութեան քարտուղար պաշտօնավարելէ կարճ ժամանակ մը ետք, Ազգային Վարժարանի մէջ որպէս ուսուցիչ կը հրաւիրուի:

Ուսուցչութեան ասպարէզէն աւելի իր սրտին խօսողը կուսակցական աշխատանքն էր:

1918-1920ի շրջանին յաղթական դաշնակիցները նոր երազներ կը սփռէին ճղակոտոր հայերու աչքին:

Նոր երազներ կը հիւսէին հայերը, այն համոզումով, թէ Ֆրանսա պիտի նախընտրէր ամբողջ հայերը քեմալական թուրքիայէն: Խանդավառ հայերը այդ շրջանին վերջնականապէս տեսան ու շօշափեցին Արեւմուտքի նենգ ծրագրիները:

Սարգիս Տիրունի այդ շրջանին աշխատակցեցաւ Հնչակեան կուսակցութեան «Տարոս» եւ «Նոր Սերունդ» օրկաններուն եւ կուսակցական պատասխանատու պաշտօններ ստանձնեց, զորս գործարեց մեծ խանդավառութեամբ:

Ֆրանսական գաղութարարները Կիլիկիայէն հեռացուցին այն բոլոր ուժերը, որոնք արգելք կը

հանդիսանային Քեմալի հետ գործակցելու գնով հայ ժողովուրդին իրաւունքները ոտնակոխ ընողներուն:

Այսօր երբ պրպտենք 1921ի «Նոր Սերունդ» թերթը, մեր աչքին առջեւ կը պարզուի տխուր պատկեր մը, պատկեր մը ուր իւրաքանչիւր տող գրաքննութեան սեւ ձեռքին գոհ դարձած է, յատկապէս այն տողերը, ուր կը խօսուի մեզի դաւող Անթանիին դէմ եւ կամ կ'ողջունուէր նորածագ Խորհրդային Հայաստանը:

Սարգիս Քեռէրեան մնաց հաւատաւոր գիւնուորը իր կուսակցութեան, հաւատարիմ հետեւողը նազարգէկներուն, Սապահներու, Ռ. Խանգատներու, Փարամազներու եւ Մուրատներու:

1921 Օգոստոս 10ի Սեւրի դաշնագիրը ոչինչ բերաւ գործնական: Հայկական նահանգներու ինքնավարութեան շուրջ տրուած խոստումներ օդը ցնդեցան:

1920ի ձմրան Մարաշ գրաւուեցաւ քեմալականներու կողմէ, կիլիկեան այլ քաղաքներ եւս պաշարուեցան:

Յունիսին ֆրանսական եւ Միլլիի շարժումին միջեւ կայացած համաձայնագրով մը Սիսի հայութիւնը ստիպուեցաւ հեռանալ իր հայրենի հողէն:

Սիսի մօտ 5000 հայութիւնը ճամբայ ելաւ դէպի Ատանա:

Սարգիս Տիրունի ինքն ալ որպէս հայ ժողովուրդի մէկ մասնիկը ցաւով հեռացաւ իր պաշտելի ծննդավայրէն:

Ատանայի մէջ անիկա բուռն պայքար մղեց ֆրանսական իմբերիալիզմի եւ դաշնակցական «Կիլիկիա» ու վերակազմեալ հնչակեան «Կիլիկեան Սուրհանդակ» թերթերուն ուսման թիկի եւ սխալ ձեւով միջազգային դէպքերը վերլուծելուն դէմ:

Ատանայի մէջ դարձաւ Գործադիր Մարմնի անդամ:

Սարգիս Տիրունի այդ շրջանին արդէն բեմերու վրայէն կը հնչեցնէր անկախութեան եւ ընկերավարական յաղթանակի շեփորը. ընկեր Յ. Պալեան կը գրէ. «Յաճախ կ'այցեւէինք իր աշխատած սենեակը Ս. Աստուածածնայ եկեղեցիի կից Արեւելեան պողոտայի վրայ ազգապատկան գետնայարկը, ընդարձակ եւ մթին խանութ մը... Կը զարմանայինք իր յոյժ անփառունակ ապրելակերպին վրայ յատկապէս: Սարգիս խիստ պարզասէր էր

Շարք էջ 7

Advertisement for Blue Cross of California health plans. Includes a diagram of plan options: PPO Share 2500 & 3500, PPO Share 1500, PPO Share 1000, PPO Share 500, PPO Saver, Basic PPO 1000 & 5000, and Also PPO Share 5000 BLUE CROSS and HMO PLANS. Text: 'Featuring PlanScape® Keeping Californians Covered... The Power of Blue SM Health coverage for every household member and every household budget. Affordable plans for the whole family.'

Advertisement for A.B.A. Insurance Services 30th Anniversary. Features a cartoon of Bedros Siamanto Maronian. Text: '1975-2005 30th ANNIVERSARY A.B.A. INSURANCE SERVICES BEDROS SIAMANTO MARONIAN 818-500-9585 805 East Broadway, Glendale, CA 91205 ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD" AUTHORIZED AGENT FOR BLUE CROSS OF CALIFORNIA LIC. # 0494056'.

ԱԶԳԱՅԻՆ

ՍԱՐԳԻՍ ՏԻՐՈՒՆԻ ԿԵԱՆՔԸ

«ՄԵՐ ՏԱՂԱԲԱՐՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՎԱՍԱՏԵԼ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՇՏԻ ՄԵՋ»

Շարունակում էք 6-էն

ու սակաւապէտ, միանգամայն նուիրուող ու անշահախնդիր: Յաճախ ժպիտով մը կը պատասխանէր, թէ կանոնաւոր թոշակ չի ստանար, սակայն գոհ էր եւ ուրախ, որովհետեւ կը ծառայէր իր պաշտելի կուսակցութեան, որուն ընկերակցական սկզբունքները հաւատքի չափ զօրաւոր էին իր մէջ»:

Այս շրջանին գոյութիւն ունեցող Միջկուսակցական մարմնի մը անդամ էր ան:

1920 Հոկտեմբեր 21ին Հաճընը կ'իջնար իր հերոս Սարգիս ձէպէճեաններու վերջին փամփուշտը արձակելէ ետք:

Տեղական հայ մամուլի եւ կուսակցութեան ջանքերով թափօր մը բողոք ելաւ: Ս. Աստուածածին եկեղեցին փակելէ եւ առաջնորդը այլապէս չէր կրնար ձգտել Պրանսայի դէմ դժգոհ ցուցարարները ուղղուեցան Ազգ. Միութեան կեդրոնատեղին, պահանջելու համար որ իբրեւ բողոքի ու զայրոյթի ցոյց Ազգ. հաստատութիւնները փակուին եւ բանալիները վերադարձուին Ֆրանսացի կայսերապաշտներուն:

Ազգ. Միութիւնը դադրեցուց իր նիստերը, հայ եկեղեցին ալ մասնակցեցաւ Մեծ Սուգին, կիրակնօրեայ աւանդական արարողութիւնը տեղի չունեցաւ, գանգակները մնացին լուռ՝ պարզելով սեւ դրօշներ:

Այս բոլոր ցոյցերուն Սարգիս Տիրունի իր մասնակցութիւնը բերաւ, մեծ եռանդ ցոյց տալով Ատանա հասնող վերապրող հաճընցիներուն:

Կիլիկիոյ պարպումէն ետք հայ ժողովուրդի ողջ մնացած բեկորները ցրուեցան աշխարհի չորս կողմերը:

Հնչակեան կուսակցութեան «Տաւրոս» թերթի տպարանը փոխադրուեցաւ Սուրիա:

Այդ շրջանին Պէյրութ հաստատուած Սարգիս Տիրունի 1922ին իր անձնական ջանքերով եւ խաղ Մ. վարդապետի քաջալերութեամբ հիմը կը դնէր Սիսի Հայրենակցական Միութեան, որ առաջին կազմակերպուած հայրենակցական միութիւնը կը հանդիսանար այս ափերուն վրայ: Ինքն էր որ յանձնախումբ մը կազմած կը պատրաստէր միութեան ծրագիրը:

1923ին ձիպէյլի Ամերիկեան Նպաստամատուցի Որբանոցին մէջ պաշտօնավարեց հայ որբերուն օգտակար հանդիսանալու մտահոգութեամբ:

Կուսակցական պայքարը բռնութեամբ զոհող հոն եւս դրսեւորուեցաւ, հնչակ-դաշնակ պայքարին իբր արդիւնք, մինչեւ իսկ խոշտանգումի ենթարկուելով Ս. Տիրունի ստիպուեցաւ տարեշրջանը չաւարտած լքել դպրոցը: Վէճերը անպատուաբեր ընթացք առին, որուն իբր հետեւանք որբանոցի պատասխանատուները ստիպուեցան փակել դպրոցը:

Ազգային կեանքը Լիբանանի մէջ դեռ սաղմնային վիճակ մը ունէր, գաղթականի պայմաններէն անմիջական գործի լծուելը դիւրին չէր:

Դաշնակցութիւնը այդ շրջանին հրատարակեց իր «Փիւնիկ», ապա «Նոր Փիւնիկ» թերթը, իսկ ժողով Աճէմեան՝ «Լիբանան» թերթը, որ հնչակեան գրիչներու ժա-

մադրավայրն էր եղած եւ որուն, ապագային, Սիսուան ծածկանունով կամ անստորագիր պիտի աշխատակցէր ընկ. Ս. Տիրունի:

Նոյն թերթին իրենց խմբագրականներով եւ չօղուածներով աշխատակցութիւն կը բերէին նաեւ ընկ. Մ. Աղազարեան, Մ. Անմահունի, Մ. Սէֆէրեան եւ ուրիշներ եւ այդ մամուլը պայքարը կը դրսեւորուէր յատուկ դիրքաւորումները գրողներուն, ըլլալ հայրենիքի եւ ըլլալ Սփիւռքի հայութեան դիրքորոշումներուն մասին:

Սարգիս Տիրունի 1923-1926ի շրջանին Հայկազ ձէջ սաստիկ նեղ պայմաններու տակ խմբագրեց «Սուրիական Մամուլ»ը:

1924ին որպէս գործիչ Հիւսիսային Սուրիոյ Վարիչ մարմինը կը լիազօրէր զինք որպէսզի շրջանները ալ կազմէր եւ կազմակերպէր:

Տիրունի չթերաջալ տր պարտականութեանց մէջ:

Բոլորը կը սիրէին ու կը գնահատէին անբասիր յեղափոխական գործիչը:

Հրապարակախօսի իր արժանիքը անգնահատելի էր, կրնար ժամեր խօսիլ եւ խանդավառել իր շրջապատը: Ունկնդիրները կը լացնէր եւ կամ կը խանդավառէր, կը կապէր գանոնք իրեն՝ հիպոստացնելով կարծես:

Իր կազմած «Սիսուան Երիտասարդաց»ի անդամներէն մին կը պատմէ, թէ ինչպէս Ֆրանսայէն ժամանած Բագարատ Սիւնիք (Աւագեան) օր մը կուսակցական բեմէն խօսած պահուն Տիրունի կը յուզուի:

Իր սպանութենէն տարի մը առաջ, երբ կ'առաջարկէն իրեն որ Ֆրանսայի ճամբով Խորհրդային Հայաստան մեկնի, կը պատասխանէ.

«Տիրունին կը նախընտրէ հոս պայքարի պատնէշին վրայ գոհուիլ...»:

Ուրիշ մը կը պատմէ. - Ձէյթունի ապստամբութեան նուիրուած ներկայացուցիչ է, լարուած՝ ժողովուրդը բեմին բացուելուն կը սպասէ, յանկարծ շուկները չորս դին՝ թէ Արուստ կղզիի աքսորէն վերադարձած Տիրունին է որ ժամանած է:

Քանի խօսք ունիմ կ'ըսէ մօրուսաւոր երիտասարդը իր պայծառ նայուածքը սեւեռելով սրահէն ներս:

- Հոս յիշեցնենք, թէ իր աքսորի շրջանին (1928) ըսի ըսաւներ կը տարածուին, թէ ան յուսահատած է, կամ լքած է Հնչակեան պայքարի դրօշը, Տիրունին բեմէն կը հնչեցնէ իր ձայնը. «Տիրունին է՛ եւ կը մ'նայ հնչակեան, ուր որ էր՝ հոն է, միշտ դիրքերու վրայ, հաւատարիմ իր գաղափարաւորութեան»:

Անիկա յաճախ կոչ կ'ուղղէր աշխարհի չորս ծագերուն մէջ ցրուած հայութեան հայրենիքի շուրջ համախմբուելու, չխաբուելու սուտ փրկիչներէն եւ հայրենիքի իրականութիւնը ճանչնալու եւ սիրելու հրաւէր կը կարդար բեմերէն:

25 Յուլիս 1925ին, տեղի ունեցաւ Լիբանանի շրջանի Ազգային երեսփոխանական ժողովի ընտրութիւն:

Քուէահամարէն պարզուեցաւ որ քուէատուփը գաղտնի բացուած

Շար.ք էջ 17

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ ՍԱՐԳԻՍ ՏԻՐՈՒՆԻ ՄԱՍԻՆ

Մ.Խ. Սոյն վկայութեան հեղինակին ինքնուրուիւնը անձանօք կը մնայ: Թողուածին տակ ստորագրուած է՝ Թղթակից-Գահիրէ:

Այնքապի Վարդանեան Կրթական Ընկերութիւնը բէւ կանուխէն հաստատած էր իր համաձայն ցարկապարանը, սակայն Կիլիկիոյ մէջ ցրուած ամերիկեան հաստատութիւններու մէջ լուսաւորչական ուսանողներու հանդէպ նեղմիտ յարանուանական խտրական ոգիէն թելադրուած ան ծրագրած էր հիմնել «Կիլիկեան Բարձրագոյն Վարժարան» մը Սիսի կարողիկոսութեան հովանիին տակ:

Ծրագրուած հաստատութեան մէջ դասախօսելու համար Սահմանադրութենէն տարիներ առաջ, Ամերիկա եւ այլուր դրկուած էին խոստմնալից երիտասարդներու հոյլ մը՝ մասնագիտութիւններու հետեւելու համար:

Պատրաստուող այդ երիտասարդներէն մաս մը Սահմանադրութենէն վերջ արդէն հասած ըլլալով, Կիլիկեան ձեմարանը իր դոնորներ կը բանար ողբացեալ Փրոֆ. Արմենակ Զամիչեանի տնօրինութեամբ՝ ներքին տնօրէն ունենալով Գերշ. Տ. Փառէն Մ. Վարդապետը (այժմ Եպիսկոպոս):

Հաստատութեան տնօրէն ժողովին եւ ուսուցչական կազմին անօրինակ նուիրումին շնորհիւ կրթարանի հմայքն ու համար կարն ժամանակուան ընթացքին ամէն կողմ տարածուած ըլլալուն, Ամերիկեան ուսումնականներ յամախոյ շատ մը լուսաւորչական ուսանողներ կ'արտորային իրենց համար կանուխէն տեղ ապահովել հոն:

